ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքների փոխանցման

ք. Երևան

20 նոյեմբերի 2015 թ.

«ՎՄՎ-ՊՐԻՆՏ» ՍՊԸ հրատարակչությունը, ի դեմս տնօրեն **Վահրամ Մնացականյանի**, մի կողմից (այսուհետև՝ Հրատարակիչ), և **«Դասերին և դասերից հետո»** գրքի հեղինակ կազմող ի դեմս **Նիկոլայ Սերգոյի Շահնազարյանի**, մյուս կողմից (այսուհետև՝ Հեղինակ), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

«Դասերին և դասերից հետո» 264 էջ ծավալով, 70x1000 1/16 չափսի գրքի հրատարակում:

Հեղինակը սույն պայմանագրով փոխանցում է Հրատարակչին **«Դասերին և դասերից հետո»** գրքի (այսուհետ Ստեղծագործություն) նկատմամբ «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքով նախատեսված իր՝ որպես Ստեղծագործության հեղինակի բացառիկ գույքային իրավունքները:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հրատարակիչը պարտավորվում է իր միջոցներով հրատարակության պատրաստել և կախված պատվերներից և վաճառքից լույս ընծայել Հեղինակի ներկայացրած աշխատանքը:

2. Հեղինակը երաշխավորում է, որ ներկայացված աշխատանքը լիովին ինքնուրույն է, չի կրկնում այլ հեղինակների աշխատանք, չի պարունակում գրագողություն, չի ոտնահարում երրորդ անձանց գույքային կամ այլ իրավունքները, որոնք կարող են հետագայում վիճաբանական իրավիճակներ ստեղծել այլ հեղինակների հետ:

2.1. Նման իրավիճակների դեպքում Հեղինակը պատասխանատու է այլոց հեղինակային իրավունքների դեմ կատարած իր ոտնձգությունների հետևանքով Հրատարակիչի կրած բարոյական և նյութական վնասների համար (դատական պրոցես, իրավաբանական ծառայություն, տուգանքներ):

3. Հեղինակը պարտավոր է իր աշխատանքները համապատասխանեցնել Հրատարակիչի սկզբունքային պահանջներին, զերծ մնալ հակաբարոյական, հակամարդկային, հակապետական, հակակրոնական քարոզչությունից, ինչը կարող է բարոյական և նյութական վնաս հասցնել հրատարակիչին:

4. Եթե աշխատանքը չի համապատասխանում Հրատարակիչի նախատեսած ձևին և բովանդակությանը, կամ նրա որդեգրած սկզբունքներին, Հրատարակիչը իրավասու է չեղյալ համարել պայմանագիրը, իսկ Հեղինակը պարտավոր է վերադարձնել հոնորարի կանխավճարը, եթե այդպիսին կա:

5. Աշխատանքը ընդունելուց հետո, Հրատարակիչը պարտավորվում է կատարել բոլոր հրատարակչական, նախատպագրական և տպագրական աշխատանքները՝ իր միջոցներով:

5.1. Հրատարակիչը այդ աշխատանքների ընթացքում իրավունք ունի պահանջել Հեղինակից կատարել որոշակի փոփոխություններ, լրացումներ, եթե դրանց անհրաժեշտությունը թելադրված է օբյեկտիվ նկատառումներով:

5.2. Ընթացիկ խմբագրական և սրբագրական աշխատանքները կատարվում է հրատարակիչի կողմից:

5.3. Մասնագիտական խմբագրական աշխատանքները կազմակերպում և վճարում կատարվում է հրատարակիչը:

5.4. Հեղինակը հրատարակչական աշխատանքների ընթացքում նույնպես իրավունք ունի իր աշխատանքում փոփոխություն մտցնել, եթե այդ փոփոխությունների իրականացումը չի գերազանցի ընդհանուր հրատարակչական ծախսերի 30%-ը:

6. Տպաքանակի, վաճառքի գնի, գովազդի միջոցների և այլ ծավալների ընտրությունը Հրատարակիչի բացառիկ մենաշնորհն է:

7. Հրատարակված աշխատանքի հեղինակային իրավունքը պատկանում է Հրատարակչին և Հեղինակին:
7.1. Հրատարակիչը իրավունք չունի աշխատանքը տարածել գոյություն ունեցող կամ ապագայում ստեղծվող ցանկացած տեխնիկական ձևերով (բացառությամբ տպագրականի), առանց Հեղինակի գրավոր համաձայնության:
7.2. Աշխատանքը հրատարակելու կամ այլ տեխնիկական միջոցներով բազմացնելու իրավունքը այլ հրատարակիչներին վաճառելու դեպքում Հրատարակիչը պարտավորվում է վճարել Հեղինակին վաճառքի ընդհանուր գնի 20%-ը:

8. Աշխատանքի հրատարակչական և վաճառքի իրավունքը պատկանում է բացառապես Հրատարակիչին:
8.1. Հեղինակը իրավունք չունի աշխատանքը տրամադրելու որևէ այլ հրատարակչության ամբողջովին կամ հատվածաբար, վերամշակված, փոփոխված կամ թարգմանված ձևով:
8.2. Հրատարակչական իրավունքը սույն պայմանագրի առարկա աշխատանքի նկատմամբ պահպանվում է 5(հինգ) տարի, քանի դեռ Հրատարակիչը հնարավորություն և ցանկություն ունի որոշակի պարբերականությամբ հրատարակելու այն:
8.3. Սակայն 5(հինգ) տարի անընդմեջ աշխատանքի վերահրատարակումը չիրականացնելու դեպքում աշխատանքի հրատարակչական իրավունքը անցնում է Հեղինակին, և Հեղինակը ազատ է իր հայեցողությամբ աշխատանքը հանձնելու այլ հրատարակիչի:

9. Հրատարակիչը պարտավորվում է վճարել Հեղինակին հոնորար ընդհանուր գրքի համար 200000 (երկու հարյուր հազար) դրամ և տրամադրել անվճար 30 գիրք :

9.1. Հրատարակիչը պարտավորվում է վճարել Հեղինակին հեղինակային հոնորարի կանխավճար ընդհանուր գումարի 50%-ի չափով:
9.2. Հրատարակիչը պարտավորվում է վճարել Հեղինակին հեղինակային հոնորարի մնացած մասը աշխատանքն ավարտելուց հետո, մեկ ամսվա ընթացքում:
9.3. Հրատարակիչը պարտավորվում է աշխատանքի վերահրատարակման դեպքում վճարել Հեղինակին վաճառքից առաջացած ընդհանուր գումարի 10%-ի չափով:
9.4. Բոլոր վճարումները կատարվում են ՀՀ դրամով:

10. Նկարչական և իլյուստրացիոն բոլոր նյութերը, որը կգնվեն Հրատարակիչի կողմից, հանդիսանում են նրա սեփականությունը և վերադարձի ենթակա չէ:

11. Հրատարակիչը պարտավորվում է առաջին իսկ հնարավորության դեպքում Հեղինակի որևէ այլ աշխատանք ընդունել հրատարակման:

12. Հեղինակը պարտավորվում է իր ցանկացած նոր աշխատանք առաջին հերթին առաջարկել Հրատարակիչին:

13. Կողմերի միջև ծագած բոլոր վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, արդյունքի չհասնելու դեպքում՝ ՀՀ գործող օրենսդրությամբ:

14. Պայմանագիրը կնքված է 2 իրավահավասարազոր օրինակից և գործում է սկսած ստորագրման պահից:

Հրատարակիչ	Հեղինակ
«ՎՄՎ-ՊՐԻՆՏ» ՍՊԸ	Անուն Նիկոլայ
Հասցեն՝ Երևան, Ավան, Դ. Վարուժան 7շ.16բն.	Ազգանուն Շահնազարյան
Բանկը՝ Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ ՓԲԸ	Անձնագիր AH 0462679
ՀՀ 220300123670000	Տրվ. 26.10.2007 թ. 050 կողմից
ՀՎՀՀ 00849407	Հասցեն՝ ք. Սևան, Շահումյան փ.35, 34 բն
Գործ. հասցեն՝ Ք. Երևան, Ազատության 24/11	Հեռ.
Հեռ. 28-54-28	Ստորագրություն
Տնօրեն Վ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ	